

Ու. Հ. Երզնայան

ԽԱՂՈՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՅԳԻՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԼՐԻՎ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Սովետական ագրոնոմիական գիտությունն, օգտագործելով Իվան Վլադիմիրովիչ Միչուրինի ագրոբիոլոգիական ուսմունքը, անընդհատ կատարելագործում է բերքատվության բարձրացման նպատակով ագրոտեխնիկական միջոցառումները: Միչուրինը, կատարելով իր ուսումնասիրությունները պտուղների և հատապտուղների վրա, բացահայտեց բույսերի զարգացման ընդհանուր օրինաչափությունները, որոնք տեսական հիմք են ծառայում գյուղատնտեսական կուլտուրաների ուսումնասիրության բոլոր բնագավառներում, այդ թվում՝ նաև խաղողի այգիների մշակության նոր, ավելի կատարելագործված ագրոտեխնիկական միջոցառումների մշակման ապարեզում:


Երիտասարդ այգիների մշակության կոմպլեքսում հիմնական օգակներից են վաղի ձևավորումը և բեռնվածությունը անկման սկզբնական տարիներին: Երիտասարդ այգիների համապատասխան ձևավորումը և ճիշտ բեռնվածությունը հնարավորություն կտան սացիոնալ կերպով և իր նպատակին ծառայելու շղայերան:

Այգիների մշակության հիմնական աշխատանքների մեքենայացումը, մեծ չափով, կախված է ձևավորման սխեմանից: Մինչև այժմ եղած ձևավորման սխեմաներից, խաղողի այգիների մշակության լայն մեքենայացումը հիմնականում ապահովում է շղայերայի վրա բարձրացրած սխեմաները:

Հայաստանում, հիմնականում Արարատյան դաշտավայրի կոնտինենտալ կլիմայի պայմաններում, շղայերայի վրա բարձրացված այգիներում բնորոշված է հովհար սխեման: Հովհար սխեման, համեմատած մի շարք սխեմաների (զանազան կորգոնների) հետ, ավելի ձկուն է: Հովհար սխեմանը յուրաքանչյուր կոնկրետ պայմաններում հնարավորություն է տալիս փոփոխություն մտցնել նրա մեջ, ելնելով այս կամ այն սորտի բիոլոգիական առանձնահատկություններից և էկոլոգիական պայմաններից: Այս ձևավորման դեպքում անվնաս կարելի է թաքմացնել, հեռացնել կամ ավելացնել վաղի թիկերը, արագ կերպով ավելացնել բերքատու մասերի քանակը, վաղի բեռնվածությունը և այլն: Սակայն այս սխեմանը Հայաստանի պայմաններում միանգամայն ազավաղված է: Սովորաբար շղայերային այգիներում էտը կատարելիս՝ բերքատու մասերը կտրում են 5—7 աչքի վրա, թողնելով մեկ վաղի վրա մինչև 20 և ավելի մասեր, որոնք մեծ մասամբ ուղղահայաց դիրքով, կապվում են ներքևի լարին:

Այս ձևով կատարված էտը հնարավորություն չի տալիս լրիվ կերպով օգտագործելու լարերի վրա վաղին հատկացված ամբողջ տարածությունը: Այսպիսի ձևավորումը հովհար են անվանվում միայն այն պատճառով, որ

մասերը դասավորված են մեկ հարթության վրա: Շնորհիվ այգիների այգ-
պիտի ձևավորման, վաղերը հաճախ չեն ստանում համապատասխան բեռ-
նըվածություն և չեն ապահովում պահանջվող սրակի ու քանակի բերք:



Նկ. 1. Արտադրություն պայմաններում, այսպես կոչված, հովհար
սխեմայով ձևավորված վաղ:

Վաղն այս կամ այն սխեմայով ձևավորվելու պետքում աչքերի թիվը
պետք է կրճատել այն չափով, որը նպաստում է նորմալ աճեցողության
ունեցող շվերի զարգանալուն, որպիսի շվերը կարող են տալ թե՛ քանա-
կով և թե՛ սրակով ամենարարժք բերք: Վաղն իր ուժից ավելի ծանրա-
բեռնելու հետևանքով, շվերը կլինեն համեմատաբար թույլ, նրանցից կըս-
տացվեն ցածր սրակի և քանակի բերք: Այդու մշակությունը պահանջում
է վաղի վրա թաղնել նրա աճեցողության ուժին համապատասխան թվով
աչքեր: Հետևաբար, վաղը պետք է ծանրաբեռնել նրա ուժի, նրա կարողու-
թյան համապատասխան:

Միաժամանակ, օգտագործելով գիտություն նվաճումները և սոցիա-
լիստական աշխատանքի հերոսների փորձը, կիրառելով ագրոտեխնիկայի
լրիվ կամպլեքսը պետք է անընդհատ բարձրացնել վաղի ուժն ու կարողու-
թյունը և դրան զուգընթաց մեծացնել վաղին արվելիք բեռնվածությունը:

Մինչև վերջին ժամանակներս բնագրված էր այն կարծիքը, թե խա-
ղողի երիտասարդ այգիներն սկսում են պտղաբերել անկման 3-րդ տա-
րում, լրիվ բերքի են գալիս 6—7-րդ տարում:

Այսպես՝ «Հայաստանի Ամպելոգրաֆիա»-ում մենք կարդում ենք՝
«Միամյա տնկումներով անկված Մսխալյին սկսում է պտղաբերել անկման
3—4-րդ տարում, լրիվ պտղաբերության է հասնում 7—8-րդ տարում» [1]:

«Սակեհատը ստաջին բերքը տալիս է անկման 4—5-րդ տարում, իսկ
նորմալ բերքը 7—8-րդ տարում» [1]: Բերքի գալու նման ժամկետներ են
սահմանում Բանանց, Ռկածիթելի, ձիլար և այլ սորտերի համար:

Ըստ Վ. Վ. Սարգսյանի տվյալների ձիլար սորտի 165 վաղից՝ արնկ-
ման 3-րդ տարում ստացվել է 10 կգ կամ յուրաքանչյուր վաղից 61 գր,

4-րդ տարում՝ 180 կգ կամ մեկ վազից 1091 գ բերք: Հաշվառման ենթարկված Ռեհմիթեյի սորտի 152 վազից յուրաքանչյուր վազի միջին բերքը տնկման 3-րդ տարում կազմել է 326 գ, այսինքն՝ 8,7 ց/հ [1]: Այս ավյալները հետևանք են այնպիսի ագրոտեխնիկայի, խնչպիսին բնականված էր այգեգործություն մեջ և երիտասարդ այգիներում կիրառվում էր արենկման սկզբնական տարիներում:

Ըստ հին ագրոտեխնիկայի վազը «ուժեղացնելու» նպատակով տրեկման 1-ին և 2-րդ տարիներում նրա վրա թուղնվում էր մեկ մտա՝ 2—3 աչքի վրա: Միտյն տնկման 3-րդ տարում պետք է սկսվեր վազի ձևավորումը: «Վազի կյանքի առաջին տարում, — գրում է Պ. Պ. Բազդուրովը, — պետք է ձգակել՝ 1) դարգացնել ուժեղ արմատային սխտեմ, 2) ստանալ մեկ հատ ուժեղ լավ փայտացած մտա, որը թեկուզ իր հիմքում ունենա լավ զարգացած աչքեր: Էտի առաջին տարում, մատը պետք է էտել 2 լրիվ կազմակերպված աչքով: Էտի 2-րդ տարում ստացված յուրաքանչյուր մտաք էտվում է նորից 2 աչքով: Էտի 3-րդ տարում՝ պետք է ստաջին պտանի վրա գրվի վազի ձևավորումը, ոչ թե հետադարձի բարձր բերքի ստացումը ի հաշիվ վազի գերբեռնվածությունը» [2]:

Երիտասարդ վազերի նման էս է ստաջարկում նաև մեկ մտա [3, 4]:

Վազի սաղարթի և արմատային սխտեմի միջև դոյաթյուն ունի փոխադարձ կապ: Կարճ էտը ստանձանափոխում է երիտասարդ վազերի տերեվային սննդատույնի մակերեսը: Վազն ունենալով սննդատույնի ստանձանափակ մակերես, քիչ սննդանյութեր է մատակարարում արմատային սխտեմին, որի հետևանքով պայմաններ չեն ստեղծվում արմատային սխտեմի ուժեղացման համար: Արմատային սխտեմն իր հերթին ուժեղ չզարգանալու հետևանքով չի մատակարարում վերդեանյա մասերին անհրաժեշտ քանակությամբ ջուր և հանքային աղեր: Այսպիսով վազն ուժեղացնելու փոխարեն թաղարկում էր և հետաձգվում էր վազի բերքի զարու ժամկետը:

Նման էտը արդյունք էր երիտասարդ այգիներում կիրառվող ցածր ագրոտեխնիկայի: Հաճախ երիտասարդ այգիները վեգետացիայի բնթույքում չէին փոխվում, չէին պարարտացվում, նույնիսկ կանոնավոր կերպով չէին ջրվում և բուժվում, որի հետևանքով երիտասարդ վազերը շատ թույլ էին աճում:

Այս տեսակետին հակառակ սցժմ մի շարք հեղինակներ (Մ. Ա. Տուպիկով [5], Խ. Բ. Բաշիրով [6] և ուրիշները) գտնում են, որ խաղողի բարձր բերքի ագրոտեխնիկայի հիմքում պետք է դնել բույսի փարթամ աճեցողությունը, մշակություն սկզբնական շրջանից:

Երիտասարդ այգիների ձևավորումն ու բերքը արագացնելու համար, պրոֆ. Տուպիկովը ստաջարկում է տնկման տարում վազի վրա աճեցնել մեկ հատ մինչև 1—1,5 մ երկարությամբ լավ զարգացած մտա: Էտի ստաջին տարում այդ մտաք էտել փայտացած մտաի տմրաջ երկարությամբ և կոացնելով՝ այն կապել լարին հորիզոնական գիրքով: Բաշիրովը նույն նպատակին հասնելու համար առաջարկում է տնկման առաջին տարում ձերատման միջոցով զարգացնել լճաշվեր, որոնք բնդունակ են հաջորդ տարում բերք տալու: Տնկման սկզբնական տարիներում երիտասարդ վազերի չափից ավելի երկար էտը և գերբեռնվածությունը, որը ստաջարկում

է պրոֆ. Տուպիկովը, պետք է ընդունել որոշ վերապահումներով: Խաղողի տարբեր սորտերի էտի երկարությունը պետք է տարբեր լինի: Մեր կարծիքով, Հայաստանի պայմաններում Արարատին, Դեղին Երևանին, Թավրիզեին և մի շարք այլ սորտեր պետք է էտել ավելի երկար՝ 8—12 և ավելի աչքերի վրա, Կախեթը, Նազկին՝ 5—7, Ոսկեհատը՝ 8—10 աչքի վրա և այլն:

Հզոր և փարթամ բույսերի աճումը պետք է սկսել խաղողի աչքուտնիկման պահից, երիտասարդ այգիներում կիրառելով բարձր ագրոտեխնիկա: Խաղողի երիտասարդ վազերի երկար էտը և առաջ ձևավորումը բարձր ագրոտեխնիկայի պայմաններում միանգամայն իրենց արգարաջնում են պրակտիկայում:


Այժմ կան բոլոր հնարավորությունները խաղողի աչքում, տնիկման հենց առաջին տարվանից, կիրառել բարձր ագրոտեխնիկա, սակեղծելով վաղի աճման ու զարգացման նորմայ պայմաններ՝ ավելացնելու վաղին տրոփելիք բեռնվածությունը և դրան զուգորթաց արագացնելու վաղի ձևավորումը և լրիվ բերքի գալու ժամկետը:

Նորատունկ այգիների բերքատվության զարգացումը սովորականին ու կոլտնտեսություններին հնարավորություն կտա համեմատաբար կարճ ժամկետում եկամուտ ստանալու այն միջոցներից, որոնք ծախսվել են նոր այգիներ անկելու վրա:

Խաղողի երիտասարդ այգիների ձևավորման և լրիվ բերքի գալու արագացումը ուսումնասիրելու նպատակով «Արարատ» արեստի Բաղրամյանի անվան սովետգյուղ Ռիտմիթելի, Դառան-գմակ, Արարատի և Բանանց սորտերի վրա արտապրական մասշտաբով գրվել են համապատասխան փորձեր: 1952 թվականի գարնանը, սովետի կողմից էտի առաջին տարում, վազերի էտը կատարվել է 2—4 աչքի վրա թողնելով մեկ մատ: Մայիսի սկզբներին կատարվել է համեմատաբար ուժեղ աճած շվերի ծերատում, ուրի հետևանքով զարգացել են զգալի թվով բճաշվեր, որոնց երկարությունը վեղեառացիայի վերջում հասել է 1,5—2 մետրի:

1953 թվականին էտի 2-րդ տարում (տնիկման 3-րդ տարում), հաշվի առնելով վաղի հզորությունը և սորտը 2—5 միամյա մատերն էտվել են 6—12 աչքի վրա: Մեկ վաղի բեռնվածությունը տատանվել է 12-ից մինչև 68 աչքի սահմաններում: Վաղերը ձևավորվել են բազմաթիվ հովհարի սխտեմով, այսինքն՝ մեկ հարթություն վրա գտնվել են մի քանի թևեր իրենց փոխարինող և բերքատու մատերով, բերքատու մատերը հորիզոնական գիրքով կապվել են բարին: Հաճախ նախորդ տարվա բճաշվերը թողվել են որպես բերքատու մատեր: Փոխարինող մատերը էտվել են 3—4 աչքի վրա: Գարնանը փորձնական այգու վարը կատարվել է ԿԻ—35 տրակտորով: Երիտասարդ վազերի աճը և զարգացումն ուժեղացնելու նպատակով փորձնական այգու մեկ հեկտարին վեղեառացիայի ընթացքում տրվել է 1200 կգ սուպերֆոսֆատ և 600 կգ ամիախալին սելիտրա: Պարարտանյութերը հողն է մտցվել 3 նվազով՝ ակոսային ձևով, 30—35 սմ խորությամբ: Գարնանը, փարելու ժամանակ, փորձնական այգուն տրվել է 600 կգ սուպերֆոսֆատ և 300 կգ ամիախալին սելիտրա: Վեղեառացիայի ընթացքում կատարված է 3 կուլտիվացիա: Կանաչ հատուկներից կատարվել են 3 շվատում՝ առաջին աչքերը լրիվ բացվելուց 8—10 օր հետո, երկրորդը՝

ձաղկումից առաջ: Ուսումը կատարվել է ակոսային ձևով, ըստ պահանջի՝ Վաղերի առիմիլյացիոն մակերեսի մեծացման նպատակով՝ շաղկերայի լարերի թիվը 3-ից հասցվել է 4-ի:



Նկ. 2. Խաղողի Ռկածիթեյի սորտի լազմաթև հովհար սխեմայով
ձևավորված վաղ տնկման 4-րդ տարում:

Մինչև վերջին ժամանակները մասնագետները ոմանք գտնում էին թև, բճամատերը բերքատու չեն և առաջարկում էին էտի ժամանակ նրանց հեռացնել:

Ֆ. Բ. Բաշիրովի, մեր և ուրիշների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ լավ դարգացած բճամատերը իրենց բերքատվությամբ հետ չեն մնում հիմնական մատերից, հետևաբար, երբ վաղի վրա եղած մատերը չեն ապահովում վաղին արվելիք բեռնվածությունը, տնհրավեշտ է, առանց խախտելու ձևավորման սխեման, որպես բերքատու մատեր թողնել նաև բճամատերը:

Հաշվատումները ցույց տվեցին, որ բճամատերի բերքատու բողբոջների տոկոսը, ինչպես հիմնական մատի մոտ, սկսած 2-րդ աչքից աստիճանաբար բարձրանում է, առանձին գեպերում հասնելով 100%-ի (աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ հիմնական մատերի և բճամատերի բերքատու աչքերի տոկոսի մեջ առանձնակի տարբերություն չկա, քանի որ բճամատերի և հիմնական մատերի միջև տարբերություն չկա: Երիտասարդ վաղերի վրա թողնված հիմնական մատերի

Աղյուսակ 1

Վաղերի բնականությունը տնկման 3-րդ տարում

Ս ո Ր Ս	Մանրաբնականությանը աչքերով հսկող հետո			Բնականությանը աչքերը բացվելուց հետո				
	Խնկերի քանակությունը	Ո Ր Ի Գ		Վեղ հեղատակի բնականությունը	Հվերքի վրա	Հվերքի վրա	Ո Ր Ի Գ	
		հիմնական վրա	բնականության վրա*				հիմնական վրա	բնականության վրա
Գառան-դմակ	43	15	28	114638	35	93310	34658	58652
Արարատի	37	17	20	28612	30	79980	37324	42656
Բանանց	28	11	17	74648	26	69316	29326	39990
Թեմիսի	26	23	3	89316	23	61318	53986	7332

Աղյուսակ 2

Հիմնական մատերի և բնամատերի բերքատու աչքերի օժ-բ

Աչքերի № և-բ հիմքից	Գառան-դմակ		Արարատի		Բանանց	
	հիմնական մատերի բերքատու աչքերի օժ-բ	բնամատերի բերքատու աչքերի օժ-բ	հիմնական մատերի բերքատու աչքերի օժ-բ	բնամատերի բերքատու աչքերի օժ-բ	հիմնական մատերի բերքատու աչքերի օժ-բ	բնամատերի բերքատու աչքերի օժ-բ
1	66,7	70,3	70,6	90,0	73,3	77,8
2	65,7	80,9	91,6	60,0	83,3	85,7
3	91,7	82,8	58,8	64,3	93,7	94,7
4	71,4	83,8	69,2	66,6	87,5	81,2
5	91,0	93,5	71,4	70,0	100,0	84,2
6	87,5	89,2	83,3	66,6	81,3	91,4
7	85,0	92,5	80,0	84,6	80,0	94,4
8	95,0	92,5	88,2	93,3	90,9	94,4
9	87,5	88,8	100,0	70,0	100,0	93,7
10	84,6	95,5	100,0	87,5	85,7	100,0

Աղյուսակ 3

Հիմնական մատերի և բնամատերի բերքը տնկման 3-րդ տարում

Ս ո Ր Ս	Հաշվառման վաղերի թիվը	Ողկոյի միջին կշիռը գ-նեքով		Մեկ վաղի բերքի միջին կշիռը գ-նեքով
		հիմնական մատերի	բնամատերի	
Գառան-դմակ	46	158	176	6759
Արարատի	31	204	181	6787
Բանանց	43	231	235	8754
Թեմիսի	20	176	211	6162

* Բնամատերը չխառնել, բնաշվերի հետ:

և բճամասերի վրա առաջացած բերքի հաշվառման տվյալները բերում ենք աղյուսակ 3-ում (նկ. 3,4):

Չնայած վաղերի երիտասարդ հասակին և բերքի զգալի քանակին խաղողի սրակը բավական բարձր է ստացվել (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Բերքի շաքարայնությունը և թթվությունը 16 IX 1953 թ.

Ս տ ր ա	Հիմնական մասերի վրա առաջացած բերքի	
	շաքարը ⁰ նեքով	թթվությունը ⁰ նեքով
Պատան-զմակ	21,1	5,25
Արարատի	19,1	5,22
Բանանց	17,5	5,39
Ռեհաձիթի	22,5	7,83

Բարձր բերք կարելի է ստանալ միայն այն դեպքում, երբ տարեց-տարի կապահովվի վաղի նորմալ աճեցողությունը: Մեր փորձերում, նա-յած վաղերին արված զգալի բնավածությունը և ստացված մեծ բերքին աճեցողությունը, շնորհիվ կիրառված բարձր աղբյուրներից, միանգա-մայն նորմալ էր: Պատան-զմակ սորտի մեկ վաղի բոլոր շվերի աճի զու-մարը միջին հաշվով կազմում էր 31,2 մ, Արարատինը՝ 29,3 մ, Բանան-ցինը՝ 22,1 մ, Ռեհաձիթիինը՝ 26,2 մ:


Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ հիմնական մասերի և բճամասերի վրա աճած շվերն իրենց երկարությամբ միմյան-ցից քիչ են տարբերվում: Չնայած վաղերի վրա զարգացած զգալի բերքին, շվերը ունեն նորմալ աճեցողություն: Այս հանգամանքը կարևոր նշանա-կություն ունի ջրառհարված կամ կարկտահարված աչիկների արագ վերա-կանդման համար:

Բճամասերը հաջորդ տարում սրպես բերքատու մասեր օգտագոր-ծելու և նրանցից նորմալ բերք ստանալու նախադրությունը, ինչպես այդ երևում է աղյուսակ 5-ի տվյալներից, առում է այն մասին, որ մեկ վեգետացիայի ընթացքում կարելի է վերականգնել ջրառհարությունից

Աղյուսակ 5

Միամյա շվերի աճեցողությունը և փայտացումը անկման 3-րդ տարում

Ցուցանիշներ	Պատան-զմակ		Արարատի		Բանանց	
	հիմնական մասերի վրա աճած	բճամասե- րի վրա աճած	հիմնական մասերի վրա աճած	բճամասե- րի վրա աճած	հիմնական մասերի վրա աճած	բճամասե- րի վրա աճած
Շվերի միջին տեղ՝ սմ	134,0	175	155	175	174	189
Փայտացման ⁰ 6-ը	81,0	83,4	82,6	80,0	89,0	90,0
Շվերի միջին հաստու- թյունը մմ	7,8	9,3	8,1	9,3	8,7	9,1



Նկ. 3. Խաղողի Ռկածիթէլի սորտը տնկման 3-րդ տարում (Բաղրամյանի
անվան սովխոզ, 1953 թ.):



Նկ. 4. Խաղողի Գառան-ղմակ սորտը տնկման 3-րդ տարում (Բաղրամյանի
անվան սովխոզ, 1953 թ.):

կամ կարկտահարությունից խիստ տուժած այգիների բերքատվությունը նույնիսկ այն դեպքում, երբ վաղի վերգետնյա մասերը ամբողջովին սչընչացել են և վաղը կուճկ է արված: Դրա համար հարկավոր է ցրտահարված կամ կարկտահարված վազերի քնած բույրացիներից զորգացած շվերք վաղ ժամկետում ձերտակել, ստանալ անհրաժեշտ թվով նորմալ բճաշվեր, հաջորդ տարում այդ բճաշվերն օգտագործել թե վազերի ձևավորման և թե բերք ստանալու համար:

1944 թվականին այգիներում տնկման 4-րդ տարում շարունակվել է վազերի ձևավորումը բաղմաթե հովհարի սխեմայով, այն հաշվով, որ վազերի վրա թողնվելիք թեքերի, պղպտու հանգույցների ու աչքերի թիվը համապատասխանի վազի ուժին ու հզորությունը: Բերքատու մատերն էտվել են 6—12 աչքի վրա, փոխարինողները՝ 3—4 աչքի վրա: Վազերի բեռնրվածությունը, նայած նրա ուժին, տատանվել է 20-ից մինչև 130 աչքի սահմաններում:

Աղյուսակ 6

Վազերի բեռնվածությունը տնկման 4-րդ տարում

Ո ս ր տ	Բեռնվածությունը աչքերով էտից հետո				Բեռնվածությունը շվերով աչքերի բացվելուց հետո			
	I վարիանտ		II վարիանտ		I վարիանտ		II վարիանտ	
	մեկ վազի	մեկ հեկտարի	մեկ վազի	մեկ հեկտարի	մեկ վազի	մեկ հեկտարի	մեկ վազի	մեկ հեկտարի
Գառան-դմակ . . .	60	159960	75	199950	50	133300	60	159960
Արարատի	50	133300	70	186620	38	101303	54	143964
Ռկածիթելի . . .	35	93310	50	133300	27	71982	37	98642

1954 թվականին փորձնական այգիներում մյուս ագրոտեխնիկական միջոցառումները եղել են նույնը, ինչ և 1953 թվականին, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում մյուս պարարտանյութերի հետ միասին օգտագործվել է կալիական պարարտանյութ, որի ընթացքում 200 կգ, իսկ անուցումների ժամանակ՝ 50-ական կգ:

Շնորհիվ փորձնական այգիներում կիրառվող բարձր ագրոտեխնիկայի, տնկման 4-րդ տարում, 1,25 հեկտար Ռկածիթելի սորտի համախառն բերքը կազմեց 162,74 ց/հ, իսկ Արարատի, Գառան-դմակ սորտերի 1,5 հեկտարինը՝ 103,22 ց/հ: Չնայած ստացված բավական բարձր բերքին, խաղողի որակը ընթացիկ տարում ևս բարձր էր: Մեծ բեռնվածությունը և բարձր բերքը տնկման 4-րդ տարում ևս բացասարար չանդրադարձավ վազերի ընդհանուր հզորություն, մատերի նորմալ աճեցողություն և փայտացման աստիճանի վրա: Արարատի մեկ վազի միջին աճը տնկման 4-րդ տարում տատանվում էր 33-ից մինչև 37 մ-ի, իսկ Գառան-դմակինը՝ 35-ից մինչև 39 մ-ի սահմաններում:

Փորձնական վազերի վրա կատարած զանազան էլեմենտների հաշվառումը ցույց տվեց, որ համապատասխան ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման դեպքում, թողնված աչքերի մեծ թիվը, ոչ միայն բացասարար չի անդրադառնում երիտասարդ վազերի ընդհանուր վիճակի վրա, այլև ընդհակառակը, մեծ բեռնվածության հետևանքով ստեղծված

ասիմիլյացիոն ապարատի շնորհիվ, վազերը փարթամանում և հզարանում են, որը երազխիք է հաջորդ տարիներում բարձր բերք ստանալու համար:

Աղյուսակ 7

Աճեցողության ու բերքատվության փոփոխությունը բոս սորակերի և թողնված աչքերի քանակի

Ցուցանիշներ	Մ ո թ ե թ					
	Արարատի		Գառն-դմակ		Ռեզիթեր	
	50 աչք	70 աչք	60 աչք	70 աչք	35 աչք	50 աչք
Հաշվառման վաղերի թիվը	28	30	28	29	30	30
Մեկ վաղի միջին բերքը գ	6345	9982	8060	9900	7048	9777
Բերքը ց/հ	169,16	266,12	214,88	263,93	137,90	260,65
Ողկույցի միջին բաշքը գ	228	268	159	185	193	200
Քաղցույցի շաքարայնությունը 219/100	20,6	20,6	20,4	22,0	20,4	21,0
Ցիտրոնի թվությունը 21X-ին	5,30	5,16	4,04	4,18	—	—
Շվի միջին աճեցողությունը սմ	149	145	132	128	—	—
Շվի փայտացումը սմ	131	125	116	110	—	—
Շվի միջին հաստությունը սմ	7,7	7,5	7,8	7,7	—	—
Բերքատվության դործուկիցը	0,46	0,49	0,77	0,78	1,03	1,07
Ողկույցների միջին թիվը մեկ պտղատու շվի վրա	1,12	1,14	1,16	1,20	1,31	1,28

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ Արարատի, միջին հաշվով, 50 աչքով ծանրաբեռնված վաղերի բերքը, հեկտարի վերածված, կազմում է 169,16 ց/հ, իսկ 70 աչքով ծանրաբեռնված, վաղերի բերքը կազմում է 266,12 ց/հ, ինչից հետո, 70 աչքով ծանրաբեռնված վաղերի շվերի միջին աճը, հաստությունը և փայտացման աստիճանը համարյա թե նույնն են, ինչ որ 50 աչքով ծանրաբեռնված վաղերինը, նույնը նկատվում է նաև Գառն-դմակի դեպքում:

Երիտասարդ այգիների ձևավորման և բերքի զալու արագացման փորձերը մենք կատարել ենք նաև Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների 11 կոլտնտեսություններում՝ 18 հեկտար տարածություն վրա:

Այս շրջանների այգիներում ընդունված է մեկ թեանի կամ երկթեանի չպայերային ձևավորումը (Գյուլյան) և այսպես կոչված տեղական սիստեմը: Տարբեր սորակերի երիտասարդ վաղերը ձևավորման առաջին տարում էտվել են 3—4 աչքի սահմաններում: Շվերի ձևավորման չի կատարվել: Էտի երկրորդ տարում, մեկ թեանի չպայերային սիստեմով ձևավորվելիս, մատերից մեկը էտվել է 2—3 աչքով, որպես փոխարինող, 2-րդը էտվել է որպես բերքատու մաս (նայած սորտին)՝ 8—12 աչքով և հարկանական գիրքով կապվել առաջին լարից: Երկթեանի չպայերային սիստեմով ձևավորվելիս մատերից երկուսը էտվել են 2—3 աչքի վրա, որպես փոխարինողներ, մյուս մատերը, որպես բերքատու, 8—17 աչքի վրա և հաստակ ուղղությամբ հորիզոնական գիրքով կապվել առաջին լարից:

Նույն ձևով էտը կատարվել է, աշտպես կոչված, տեղական սիստեմով Լալվարի, միայն այն տարբերությամբ, որ բերքատու մասերը աղեղնաձև կոտցնելով կապվել է հենարաններին (տարիներին): Հետագա տարիներում էտը կատարվել է նույն ձևով: Փորձերը տարվել են բարձր ագրոտեխնիկայի ֆոնի վրա:

Տարբեր սորտերի բերքատվությունը, բոս տարիների, պատվաստված Բեդյանյերի X Թիպարիա 5ԲԲ, Բեդյանյերի X Թիպարիա 420 Ա և Թիպարիա X Ռուպեստրիս 3309-ի վրա հետևյալ պատկերն է ներկայացնում (աղյուսակներ 8 և 9):

Աղյուսակ 8

Խաղողի տարբեր սորտերի բերքատվությունը տնկման 3-րդ, 4-րդ, 5-րդ տարիներում (նոյեմբերյանի շրջան, հոգով գյուղ)

Ո ս ր տ (պատվաստացու.)	Պատվաստվածության ժամկետը	Վաղեմի թիվը	1950 թ.		1951 թ.		1952 թ.	
			մեկ վաղի միջին բերքը (գ)	բերքը ց/հ	մեկ վաղի միջին բերքը (գ)	բերքը ց/հ	մեկ վաղի միջին բերքը (գ)	բերքը ց/հ
Լալվարի	5 ԲԲ	62	2586	103,44	3390	135,60	3526	141,04
»	420 Ա	50	2574	102,96	3534	141,36	3453	138,12
Թեաժիթելի	5 ԲԲ	55	2206	38,24	2140	85,60	2265	90,60
»	420 Ա	56	1157	62,28	1583	63,32	2083	83,32
Կարեբնե	5 ԲԲ	55	1212	48,48	1639	65,56	1595	63,60
»	420 Ա	56	740	29,60	1346	53,84	1620	64,80
Ալիգոտե	5 ԲԲ	53	1363	54,52	1757	70,28	1262	50,48
»	420 Ա	52	1214	48,56	1411	56,44	1148	45,92
Սապեթավի	5 ԲԲ	49	1032	41,28	1712	68,48	1516	60,64
»	420 Ա	56	1073	42,92	1703	68,32	2244	89,76
Մձվանե	5 ԲԲ	50	1224	48,96	1240	49,60	1082	43,28
»	420 Ա	52	838	33,52	1123	44,92	1256	50,24

Չնայած երիտասարդ վաղերից ստացված զգալի բերքին, աճեցողությունը միանգամայն նորմալ է հղել:

Աղյուսակ 9

Մեկ վաղի միջին աճեցողությունը մետրերով

Ո ս ր տ (պատվաստացու.)	Պատվաստվածություն	Տնկման 2-րդ տարին	Տնկման 3-րդ տարին	Տնկման 4-րդ տարին
Լալվարի	3309	4,89	7,09	16,82
»	5 ԲԲ	5,47	5,41	20,10
Թեաժիթելի	3309	5,61	13,29	20,60
»	5 ԲԲ	5,10	10,11	14,61
Կարեբնե	3309	5,81	7,00	13,87
»	5 ԲԲ	4,72	9,95	15,99

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդ այգիներում կիրառելով համապատասխան ագրոտեխնիկական միջոցառումներ մենք ըստ ձևերի մենք վաղի բնական կարողությունը, իսկ համապատասխան և ճիշտ էտի միջոցով, մենք հնարավորություն ունենք արագացնելու երիտասարդ վաղերի ձևավորումն ու լրիվ բերքի գալը:

Հայկական ՍՍԽ ԳԱ Խաղողագործությունների և գինեգործությունների ինստիտուտ

Ստացվել է 9/11—1955 թ.:

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեպուբլիկայի ամպելոգրաֆիա, էջ 67, 73, 87, 155—156, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1947:
2. Благонравов П. П. Формирование и подрезка виноградной лозы. Пищепромиздат, Москва, 1947.
3. Խաղողագործության տեղական տարիումներ, Հայպետհրատ, 1951.
4. Ագրոկանոններ խաղողի այգիների հիմնական և մշակութային, Հայպետհրատ, 1954:
5. Тупиков В. А. Ускорение начала плодоношения молодых виноградников. Журн. „Виноделие и виноградарство СССР“, 10, 1953.
6. Баширов Ф. Б. О теоретических основах обрезки виноградной лозы. Журн. „Виноделие и виноградарство СССР“, 9, 1952.

Р. О. Ергесян

Мероприятия по ускорению формирования и вступления в полное плодоношение молодых виноградников

Р е з ю м е

В совхозе им. Баграмяна треста „Арагат“ и в колхозах северо-восточных районов Армении проводились опыты по ускорению формирования виноградного куста и вступления молодых виноградников в полное плодоношение. В совхозе опыты проводились с 1953 г. на сортах Ркацителі на площади 1,25 га, Гаран-дмак, Арарати и Бананц на площади 1,5 га. В первый год формирования (1952 г.) кусты были обрезаны работниками совхоза на два-четыре глазка, а в мае того же года верхушки молодых побегов были прищипнуты, что привело к образованию значительного количества пасынков, длина которых в конце вегетации достигала до 2-х метров. На следующий год (во второй год обрезки) обрезка производилась нами. В зависимости от сорта и состояния куста нагрузка составляла от 6 до 68 глазков, в среднем 26—43 и более глазков, причем в качестве стрелок плодоношения оставлялись как нормальные лозы, так и прошлогодние пасынки, так как мы принципиальной разницы между ними не находим. Кусты были сформированы по многорукавной веерной системе. В третий год обрезки количество рукавов и плодовых звеньев оставлялись соответственно с мощностью куста, причем на кусте, в зависимости от его мощности, нагрузка колебалась от 20 до 130 глазков.

На опытном винограднике проводилась высокая агротехника: осенняя и весенняя перепахка с глубоким и бороздковым внесением химического удобрения—в 1953 г. суперфосфата—600 кг, аммиачной селитры—300 кг, в 1954 г. суперфосфата—600 кг, аммиачной селитры—300 кг, калийной соли—200 кг на 1 га. Перед цветением и после цветения в виде подкормки было внесено: в 1953 г. суперфосфата—300 кг, аммиачной селитры—150 кг, калийной соли—150 кг.

Своевременно и высококачественно проведены и другие агротехнические работы. Для увеличения ассимиляционной поверхности куста на шпалере натянули вместо трех, четыре проволоки.

Опыты показали, что по плодоносности пасыnkовые глазки не уступают основным. В результате высокой агротехники средний урожай винограда одного куста на третий год посадки достиг у Гаран-дмак — 6759 г. Арарати — 6787 г, Ркацители — 6162 г. Бананц — 8754 г, причем довольно высокого качества.

В четвертый год посадки валовой урожай Ркацители на площади 1,25 га составил 162,7 ц/га. Урожай учетных кустов при средней нагрузке 35 глазков составил 187,9 ц/га, при 50 глазках — 260,65 ц/га. Валовой урожай Гаран-дмак и Арарати на площади 1,5 га составил 103,22 ц/га. Урожай учетных кустов Арарати при средней нагрузке в 50 глазков составил 169,16 ц/га, 70 глазков — 265,12 ц/га, Гаран-дмак при 60 глазках — 214,88 ц/га, 75 глазков — 263,93 ц/га.

Средний прирост в третий год посадки у сорта Гаран-дмак составляет 31,6 м. Арарати — 20,3 м, Бананц — 22,1 м. Ркацители — 26,2 м. В четвертый год посадки средний прирост кустов колебался у сорта Арарати от 33 до 37 м, Гаран-дмак от 35 до 39 м. Побеги не только хорошо растут, но имеют и нормальную толщину.

В опытах, проводимых в северо-восточных районах Армении, молодые кусты различных сортов винограда подрезывались на 3—4 глазка. В этом случае прищипывание побегов не производилось. Во второй год подрезки, при формировании кустов одноплечей и двухплечей шпалерной системой сучки замещения подрезывались на 2—3 глазка, плодовые стрелки — на 8—12 глазков. Обрезка производилась подобным образом и в том случае, когда кусты формировались по местной системе.

Опыты проводились на высоком уровне агротехники. Урожай различных сортов винограда в третий год посадки колебался от 29,6 (Каберне, привитый на Берландиери × Рипария 420 А) до 103,41 ц/га (Лалварц, привитый на Берландиери × Рипария 5 ББ). Урожай в четвертый год посадки колебался от 53,84 (Каберне, привитый на 420 А), до 141,36 ц/г (Лалварц, привитый на 420 А).

Наряду с высоким урожаем обеспечивается нормальный прирост кустов. Средний прирост кустов различных сортов винограда во второй год посадки колебался от 4,72 до 5,81 м, в третий год — от 7,09 до 13,29 м, четвертый год от 13,67 до 20,6 м.

Таким образом, в молодых виноградниках, применяя соответствующие агротехнические мероприятия, подымается общая мощность кустов и, применяя соответствующую нагрузку, можно ускорить формирование и вступление молодых виноградников в полное плодоношение.